ԽՄԲԱԳՐԻ ՄԵԿՆԱԿԵՏԻՑ

Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն, հ. 1, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Ե., 2005, 570 էջ:

Հրապարակի վրա է ականավոր պատմաբան, պրոֆ. Ռ. Գ. Հովհաննիսյանի քառահատոր աշխատության հայերեն առաջին հատորը: Իբրև դարակազմիկ աշխատություն՝ այն ունի իր յուրահատուկ ճակատագիրը. հատորն անգլերե- նով լույս է տեսել դեռևս 1971 թ., Կալիֆորնիայի (ԱՄՆ) համալսարանի հրատարակությամբ, մինչև 1996 թ. նույն լեզվով հրատարակվել են քառահատորի մյուս գրքերը, և միայն գրեթե տասը տարի անց է, որ հայ ընթերցող լայն հասարակությանը հայտնի է դառնում այս աշխատության առաջին գիրքը:

Անկախ աշխատության տասնամյակների պատմությունից՝ այն պահպանում է իր հրատապությունն ու կարևորությունը նաև այսօր և ահա թե ինչու: Հայաստանի առաջին հանրապետության պատմությունը, ինչպես և դրա գիտական ուսումնասիրությունը, և սա բոլորիս է հայտնի, երկար ժամանակ արգելված թեմա էին խորհրդային պատմագիտության մեջ, և եթե անգամ հիշվեր այդ պատմությունը, ապա միայն քամահրանքով ու կանխակալ որակումներով: Քաղաքականացված և քարոզչական մոտեցումը դարձել էր արգելապատնեշ այս աշխատության և Հայաստանի ընթերցողի միջև: Այսօր այդ ամենը մնացել է պատմություն դարձած անցյալում, և փաստական իրողությունը աշխատության հայերեն ծնունդն է:

«Հայաստանի Հանրապետության» սույն հատորը խոշոր կտավի պատմագիտական գործ է՝ այն ընդգրկում է հայոց անկախ պետականության վերածնության 1918-1919 թթ. ժամանակաշրջանի պատմությունը: Այս կարճ ժամանակահատվածը, այնքան կարևոր ու ճակատագրական հայ ժողովրդի գոյապահպանության և նրա պատմական ընթացքի տեսակետից, հագեցած է իրադարձությունների և աշխարհաքաղաքական վայրիվերումների ապշեցուցիչ հարստությամբ, հաճախ դրամատիկ ու անսպասելի բեկումներով, հատկապես ոչ մեծաքանակ ժողովուրդների համար, ինչպիսին մերն է, քաղաքական, տնտեսական ու ռազմական զարմանալի շրջադարձերով: Իրարամերժ ու հակասական իրադարձություններով հագեցած պատմական այս ընթացքի մեջ հայ ժողովուրդը ներդնում էր իր հավաքական կամքի և գոյատևելու իրավունքի տրամաբանությունը: Ռ. Հովհաննիսյանին լիուլի հաջողվել է ցույց տալ պատմական այս գործընթացն իր շարժման և ամբողջ բովանդակության մեջ, և այս հաջողության մեջ պետք է տեսնել, կարծում ենք, այս գրքի կայացումն ու պատմագիտական հմայքը:

Իր աշխատության պատմական կառույցը հեղինակը ստեղծել է խորապես կշռադատված հյուսվածքով, պատմական նյութի գիտական ձևավորման մեջ ամբողջի և բաղադրամասերի համոզիչ համամասնությամբ ու շարադրումով: Այս պատճառով էլ աշխատության մեջ արծարծված թեմաների վիթխարի բազմազանությունը հեղինակի գրչի տակ վերածվել է գիտական կուռ ամբողջականության և համակարգված կառույցի: Պատմաբանը հմտալի քննության է ենթարկել

ժամանակաշրջանի և Ռուսական նախկին կայսրության տարածքի ժողովուրդների բազմաթիվ հիմնահարցեր՝ սկսած Փետրվարյան հեղափոխության (1917), Հայաստանի հանդեպ Ժողկոմխորհի վարած քաղաքականության, Անդրկովկասյան կոմիսարիատի և Սեյմի ստեղծման իրողություններից, օսմանյան թուրքերի հետ այսրկովկասյան ժողովուրդների ռազմաքաղաքական հարաբերություններից և վերջացրած անկախության ուղին բռած Հայաստանի ծայրահեղորեն բարդ ներքին ու արտաքին իրավիճակների բացահայտումներով: Այս աշխատության մեջ առաջին անգամ են տրվում պատմագիտական ստվար շերտեր կազմող բազմաթիվ հիմնահարցերի առաջադրումներ և լուծումներ, որոնք էլ, ըստ էության, կազմում են նրա գիտական նորույթը: Նշված բոլոր հիմնահարցերը ներհյուսված են միմյանց՝ ներքին կապերով ու հարաբերություններով, բխում են մեկը մյուսից՝ լրացնելով ու ամբողջացնելով հեղինակի մտադրությունը, այն է՝ ներկայացնել Հայաստանի մանուկ հանրապետության կառավարության ձևավորման ու գործունեության, ներքին ու արտաքին քաղաքական հարաբերությունների, թուրքական ռազմաքաղաքական ճնշումների, Ռուսաստանի կարմիր և սպիտակ բռնկումների միջև խուսանավելու, միջազգային հանրության մեջ իր համեստ տեղը գրավելու հակամետ Հայաստանի ջանքերի ողջ պատմության վերարտադրությունը: Այսօրվա Հայաստանի Հանրապետության համար որպես պատմական ուսանելի դասերի հանրագումար կարող են լինել Ռ. Հովհաննիսյանի պատմաքննական վերլուծության այն հիմնախնդիրները, որոնք վերաբերում են հայ-ռուսական, հայ-թուրքական, հայ-ադրբեջանական, հայ-վրացական, ինչպես և արևմտյան տերությունների հետ Հայաստանի ռազմաքաղաքական ու դիվանագիտական հարաբերություններին: Մնում է արժանին հատուցել նաև պատմաբանին այն նուրբ դիտարկումների համար, որ նա անում է Լեռնային Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի 1918 թ. պատմության՝ գրեթե մոռացության տրված ծալքերը լուսաբանելու և արժեքավորելու ուղղությամբ:

Աշխատության մեջ ամենուրեք զգացվում է հեղինակի հույժ ուշադիր հայացքը՝ ուղղված իր բացահայտած իրականությանը, մարդկանց, դեպքերին և իրադարձություններին: Երբեք չկտրվելով փաստերն ու տվյալները անկողմնակալ ու հիմնավորապես վերլուծողի ընթացքից՝ Ռ. Հովհաննիսյանը ստեղծել է ուսումն ասիրողի անկրկնելի մի ոճ, յուրահատուկ ջերմությամբ շնչող աշխատանք, որ կարող էր մատչելի լինել միայն ճշմարիտ ու նրբազգաց հայրենասերին, իր ժողովրդի ճակատագրին հետամուտ և նրանով ապրող ու հպարտացող նվիրյալ մտավորականին: Այս առթիվ արժե հիշատակել ներքին խոր դրամատիզմով ու լարվածությամբ բնութագրվող՝ աշխատության այն բազմաթիվ հատվածները, որոնք վերարտադրում են հանրապետության առաջին ձմեռվա դժվարությունները, գաղթականների, սովի ու համաճարակների բազմակնճիռ խնդիրները, ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցած ամերիկյան տնտեսական օգնությունը (համապատասխան կառույցների գործունեության բարեխիղճ լուսաբանումներով), հանրապետության կառավարման բարդությունները, Կարսի մարզի միացումը և այլն: Ռ. Հովհաննիսյանը քայլ առ քայլ վերարտադրում է հանրապետության 1918 թ. մայիս – 1919 թ. օգոստոս ժամանակահատվածի ամբողջ պատմությունը իր կարևոր ուղղությունների, դրանք բնութագրող ու լուսաբանող մանրամասների մեջ՝ դառնալով այդ պատմության անխոնջ ու անաչառ տարեգիրն ու գնահատողը:

Աշխատությունը գրված է եվրոպական մի շարք լեզուներով հրատարակված, ինչպես և հայերեն, ռուսերեն ու թուրքերեն ստվարածավալ աղբյուրների ու գրականության հենքի վրա: Իր բազմաբովանդակ ընդգրկումներով այն մնում է ցօրս անգերազանցելի աշխատություն՝ Հայաստանի առաջին հանրապետության պատմության գիտական լուսաբանության տեսակետից: Ռ. Հովհաննիսյանի այս աշխատությունը, հիրավի, Հայաստանի անկախ հանրապետության պատմու-

թյան գիտական իրացումն է, որը նշանակալիորեն առաջ է մղում հայ պատմագիտական միտքը, և որի նշանակությունը դժվար է գերագնահատել իր անչափելի ճանաչողական արժեքի և թեմայի հետագա գիտական անդրադարձումների իմաստով:

Իբրև գրքի խմբագիր՝ կցանկանայի հատկապես առանձնացնել հեղինակի հետևողականությունը հիմնախնդիրները վերլուծելու և սպառելու գործում, նուրբ ու պատկերավոր լեզվամտածողությունը և շարադրանքի ակնառու հմտությունը (որ անվիճելի են բնագրում, իսկ հայերեն թարգմանության կտրվածքով՝ թողնում ենք ընթերցողի լայնախոհությանը), որոնք իսկական դպրոց կարող են լինել առանձնապես մեր երիտասարդ պատմաբանների համար:

Կարելի է անվարան ասել, որ պրոֆ. Ռ. Հովհաննիսյանի «Հայաստանի Հանրապետություն» աշխատության առաջին գրքի հայերեն հրատարակությունը հաջողությամբ գլուխ է բերվել: Մասնագետները և ընթերցող լայն շրջանները սպասում են աշխատության հետագա վերադարձին հայրենիք՝ հաջորդ հատորների հայերեն հրատարակությանը:

ԽԱՌԱՏՅԱՆ Ա. Ա.
Պատմական գիտությունների դոկտոր